ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 14 » ապրիլի 2017թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի տեղակալ _____ Հ. Այունց

ԳԲԽ-43/17 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի 05.04.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 05.04.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ վերջինս մասնակցել է ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից Բյուրեղավան համայնքի մշակույթի տան վերանորոգման, Նոր Հաճն համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, Չարենցավան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, Հրազդան համայնքի որոշ

բարձրահարկ շենքերի վերելակների վերանորոգման, Եղվարդ համայնքի գեղագիտական կենտրոնի վերանորոգման, Ջրվեժ համայնքի դպրոցի մարզադահլիճի վերանորոգման, Ակունք համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգման, Գառնի համայնքի առողջության կենտրոնի շենքի վերանորոգման, Ձորաղբյուր համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգման, Արզական համայնքի մշակույթի տան պատուհանների փոխման, Քանաքեռավան համայնքի մշակույթի տան վերանորոգման, Նոր Երզնկա համայնքի փողոցների ասֆալտապատման և Առինջ համայնքի փողոցների ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ չափաբաժինների մասով ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի հայտը մերժվել է՝ հավելված N 9 տուժանքի համաձայնագրում գլխավոր հաշվապահի ստորագրության բացակայության հիմնավորմամբ: Վերոգրյալի վերաբերյալ Ընկերությունը հայտնել է, որ վերջինիս հայտը ստորագրվել է միայն տնօրենի կողմից, իսկ գլխավոր հաշվապահի ստորագրությունը բացակայել է, քանի որ վերջինս գտնվել է հերթական արձակուրդում և նրա պարտականությունները դրված են եղել «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի տնօրենի վրա՝ կից ներկայացնելով Ընկերության գլխավոր հաշվապահի 2016թ.-2017թ. աշխատանքային տարվա հերթական արձակուրդի վերաբերյալ թիվ 13 հրամանի քաղվածքը (այսուհետ նաև՝ Քաղվածք):

Ըստ Ընկերության՝ վերջինիս կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտը բավարարել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ և 31-րդ հոդվածներով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից՝ «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ն խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժելու և հրավերի պահանջներին չհամապատասխանող ճանաչելու մասին որոշումը, դադարեցնել Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ չափաբաժինների մասով պայմանագիր

կնքելու մասին որոշումը, ինչպես նաև կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել նշված չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու գործընթացը:

Ընկերությունը, մասնակցելով 11.04.2017թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ԳԲԽ-43/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է բողոքով ներկայացրած պահանջն ամբողջությամբ, միաժամանակ հայտնել է, որ չի ներկայացրել գլխավոր հաշվապահի 2016թ.-2017թ. աշխատանքային տարվա հերթական արձակուրդի վերաբերյալ թիվ 13 հրամանի քաղվածքը:

2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ Կոտայքի մարզպետարանը 10.04.2017թ. թիվ 01/11.2/1453-17 գրությամբ «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում Ընկերության հայտը մերժվել է, քանի որ հայտի N 9 հավելվածի վրա նշված գլխավոր հաշվապահ Լ. Նիկողոսյանի ստորագրությունը բացակայել է:

Պատվիրատուն նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն ուսումնասիրել է Ընկերության կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը և հայտնաբերել անհամապատասխանություններ հրավերի պահանջներին, մասնավորապես, N 9 հավելվածում՝ տուժանքի մասին համաձայնագրի մեջ նշված և լրացված է գլխավոր հաշվապահի անուն ազգանունը, սակայն առկա չի եղել վերջինիս ստորագրությունը, ինչպես նաև բացակայել է տվյալ դաշտի ստորագրման համար անհնարինությունը հիմնավորող որևէ փաստաթուղթ:

Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 4-րդ պարբերության՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով, ինչպես նաև «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

Պատվիրատուն հայտնել է, որ համաձայն Ընթացակարգի հրավերի N 9 հավելվածում տուժանքի մասին համաձայնության ներկայացված ձևի և ՀՀ ֆինանսների նախարարության 29.03.2017թ. թիվ 04/73-3/5583-17 գրության՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունել Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Պատվիրատուն մասնակցելով 11.04.2017թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ԳԲԽ-43/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, առարկել է Ընկերության կողմից ներկայացված բողոքի դեմ՝ ներկայացնելով գրավոր առարկությունը:

3. ԳԲԽ-43/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-43/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից Բյուրեղավան համայնքի մշակույթի տան վերանորոգման, Նոր Հաճն համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, Չարենցավան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, Հրազդան համայնքի որոշ բարձրահարկ շենքերի վերելակների վերանորոգման, Եղվարդ համայնքի գեղագիտական կենտրոնի վերանորոգման, Ջրվեժ համայնքի դպրոցի մարզադահլիճի վերանորոգման, Ակունք համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգման, Գառնի համայնքի առողջության կենտրոնի շենքի վերանորոգման, Ձորաղբյուր համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգման, Արզական համայնքի մշակույթի տան պատուհանների փոխման, Քանաքեռավան համայնքի մշակույթի տան վերանորոգման, Նոր Երզնկա համայնքի փողոցների ասֆալտապատման և Առինջ համայնքի փողոցների ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02» ծածկագրով գնումների հայտարարությունը

նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ն:

2. «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի Ընթացակարգի թվով 10 չափաբաժիններին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 9 հավելվածը՝ տուժանքի մասին համաձայնագրերը, հաստատված են եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ միայն Ընկերության տնօրենի կողմից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 22.03.2017թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետով որոշվել է մերժել «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի ներկայացրած հայտը, քանի որ հրավերին չհամապատասխանող փաստաթղթերը շտկման ենթակա չեն:

4. ՀՀ Կոտայքի մարզպետարանը 27.03.2017թ. թիվ 01/11.2/1233-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով պարզաբանել, թե արդյոք առանց գլխավոր հաշվապահի էլեկտրոնային կամ այլ ձևի ստորագրության հայտերը ենթակա են մերժման, թե ոչ:

5. Ի պատասխան Պատվիրատուի վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.03.2017թ. թիվ 04/73-3/5583-17 գրությամբ, հղում կատարելով «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածների վրա, ինչպես նաև նկատի ունենալով, որ ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանով հաստատված հրավերների օրինակելի ձևերին կից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի վավերապայմաններով սահմանված է ընկերության տնօրենի և գլխավոր հաշվապահի ստորագրության պահանջ, հայտնել է հետևյալը՝

ա) եթե կազմակերպությունում հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացվում է հաշվապահական ծառայության կամ կազմակերպության աշխատակիցը համարվող հաշվապահի միջոցով, ապա տուժանքի մասին համաձայնագիրը գլխավոր հաշվապահի մասով պետք է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվի համապատասխանաբար հաշվապահական ծառայության ղեկավարի կամ հաշվապահի կողմից, իսկ տնօրենի մասով՝ տնօրենի կողմից,

բ) հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով հաշվապահական հաշվառումը վարելու դեպքում՝ տուժանքի մասին համաձայնագիրը գլխավոր հաշվապահի մասով պետք է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվի այդ կազմակերպության լիազորված անձի կողմից, իսկ տնօրենի մասով՝ տնօրենի կողմից,

գ) եթե հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ, ապա տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվում է առանց գլխավոր հաշվապահի ստորագրության: Ընդ որում, եթե տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվել է միայն կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, նկատի ունենալով, որ տվյալ դեպքում հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ:

6. «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ն Կենտրոնին է ներկայացրել Ընկերության գլխավոր հաշվապահի 2016թ.-2017թ. աշխատանքային տարվա հերթական արձակուրդի վերաբերյալ ***17.03.2017թ.*** տրված թիվ 13 հրամանի քաղվածքը, որտեղ նշվել է.« «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի գլխավոր հաշվապահ Լիլիթ Գագիկի Նիկողոսյանին տրամադրել 2016թ.-2017թ. աշխատանքային տարվա հերթական արձակուրդից 12 աշխատանքային օր՝ սույն թվականի մարտի 20-ից: Ներկայանալ աշխատանքի ապրիլի 5-ին: Հաշվապահի պարտականությունները դնել Ընկերության տնօրեն՝ Գ. Նիկողոսյանի վրա»:

7. 05.04.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքով «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ն խնդրել է կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու գործընթացը:

8. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն՝ ի դեմս ԳԲԽ-43/17 բողոքը քննող հանձնաժողովի, 19.04.2017թ. կայացրած որոշմամբ, բավարարել է «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ պահանջը:

4. ԳԲԽ-43/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի 05.04.2017թ. բողոքը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, ՀՀ Կոտայքի մարզպետարանի 10.04.2017թ. թիվ 01/11.2/1453-17 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, ՀՀ ֆինանսների նախարարության 29.03.2017թ. թիվ 04/73-3/5583-17 գրությունը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված հայտի ապահովումը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերում, Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտ ներկայացնելիս՝ ***փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ,*** իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի երբ հայտում*** բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ ***գնային***

առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Մասնակցի կողմից հայտի ապահովումը ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ն հրամանով հաստատված գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերի 9-րդ հավելվածով նախատեսված տուժանքի մասին համաձայնության օրինակելի ձևի համաձայն՝ որը **ենթակա է ստորագրման մասնակցի տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից**:

ՀՀ Կոտայքի մարզպետարանը 27.03.2017թ. թիվ 01/11.2/1233-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով պարզաբանել, թե արդյոք առանց գլխավոր հաշվապահի էլեկտրոնային կամ այլ ձևի ստորագրության հայտերը ենթակա են մերժման, թե ոչ, ի պատասխան որի ՀՀ ֆինանսների նախարարությունը, նկատի ունենալով, որ ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանով հաստատված հրավերների օրինակելի ձևերին կից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի վավերապայմաններով սահմանված է ընկերության տնօրենի և գլխավոր հաշվապահի ստորագրության պահանջ՝ 29.03.2017թ. թիվ 04/73-3/5583-17 գրությամբ հայտնել է հետևյալը՝

ա) եթե կազմակերպությունում հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացվում է հաշվապահական ծառայության կամ կազմակերպության աշխատակիցը համարվող հաշվապահի միջոցով, ապա տուժանքի մասին համաձայնագիրը գլխավոր հաշվապահի մասով պետք է էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվի համապատասխանաբար հաշվապահական ծառայության ղեկավարի կամ հաշվապահի կողմից, իսկ տնօրենի մասով՝ տնօրենի կողմից,

բ) հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով հաշվապահական հաշվառումը վարելու դեպքում՝ տուժանքի մասին համաձայնագիրը գլխավոր հաշվապահի մասով պետք է էլեկտրոնային թվային ստորագրությամբ

հաստատվի այդ կազմակերպության լիազորված անձի կողմից, իսկ տնօրենի մասով՝ տնօրենի կողմից,

գ) ***եթե հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ, ապա տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվում է առանց գլխավոր հաշվապահի ստորագրության: Ընդ որում, եթե տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվել է միայն կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, նկատի ունենալով, որ տվյալ դեպքում հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ:***

Այսպիսով, «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ն ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից կազմակերպված «ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 9 հավելվածով ներկայացրել է հայտի ապահովում՝ տուժանքի մասին համաձայնագիր, որը հաստատված է եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ միայն Ընկերության տնօրենի կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 22.03.2017թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետով որոշվել է մերժել «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի ներկայացրած հայտը, քանի որ Ընկերության կողմից ***ներկայացված հայտի ապահովումը համարվել է*** հրավերին չհամապատասխանող, ինչն էլ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ շտկման ենթակա չի:

«Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ն բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի մասնակցության հայտը ստորագրվել է միայն Ընկերության տնօրենի կողմից, քանի որ Ընկերության գլխավոր հաշվապահը տվյալ պահին գտնվել է հերթական արձակուրդում:

Ընկերության կողմից ներկայացվել է գլխավոր հաշվապահի 2016թ.-2017թ. աշխատանքային տարվա հերթական արձակուրդի վերաբերյալ ***17.03.2017թ.*** տրված թիվ 13 հրամանի քաղվածքը, ըստ որի՝ ««Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի գլխավոր հաշվապահ Լիլիթ Գագիկի Նիկողոսյանին տրամադրել 2016թ.-2017թ. աշխատանքային տարվա հերթական արձակուրդից 12 աշխատանքային օր՝ սույն թվականի մարտի 20-ից: Ներկայանալ

աշխատանքի ապրիլի 5-ին: ***Հաշվապահի պարտականությունները դնել Ընկերության տնօրեն՝ Գ. Նիկողոսյանի վրա»:***

Այսպիսով, Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի կողմից հայտը ներկայացնելու պահին՝ ***22.03.2017թ.***, Ընկերության հաշվապահական հաշվառումը վարել է կազմակերպության ղեկավարը, ուստի տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվել է առանց գլխավոր հաշվապահի ստորագրության, քանի որ վերջինիս պարտականությունները դրված են եղել «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի տնօրենի վրա:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 29.03.2017թ. թիվ 04/73-3/5583-17 գրության՝ եթե հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ, ապա տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվում է առանց գլխավոր հաշվապահի ստորագրության: ***Ընդ որում, եթե տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվել է միայն կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ, ապա մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, նկատի ունենալով, որ տվյալ դեպքում հաշվապահական հաշվառումը վարվում է կազմակերպության ղեկավարի կողմից անձամբ:***

Ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացրած վերը նշված թիվ 13 հրամանի քաղվածքը, Կենտրոնը գտնում է, որ նման ապացույցի առկայության պայմաններում, հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.03.2017թ. թիվ 04/73-3/5583-17 գրությունը՝ Ընկերության հայտը ենթակա չէր մերժման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի 05.04.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի հայտը մերժելու և հրավերի պահանջներին չհամապատասխանող ճանաչելու մասին որոշումը, դադարեցնել Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ նման որոշում առկա լինելու պարագայում:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝ Ռ. Մկրտչյան

Գնումների վերապատրաստման և խորհրդատվության բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-43/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան